ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 4-Լ

«08» 01 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 5-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված կիբերհանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 136-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 151-րդ հոդվածի 2-րդ մասով, 201-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 202-րդ հոդվածով, 204-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 238-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 239-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 240-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 313-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 314-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 328-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 422-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների փաստերով նախաձեռնված քրեական վարույթներով իրականացվող նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթների արդյունավետությունը բարձրացնելու, նշված քրեական վարույթներով դատախազների անհրաժեշտ մասնագիտացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 4-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2023 թվականի մարտի 13-ի N 16 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2024 թվականի հունվարի 9-ի N 5-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 7-րդ կետում լրացնել նոր՝ 7.4-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.4) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված կիբերհանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 136-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 151-րդ հոդվածի 2-րդ մասով, 201-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 202-րդ հոդվածով, 204-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 238-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 239-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 240-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 313-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 314-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 328-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 422-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների փաստերով նախաձեռնված քրեական վարույթներով իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթների ընդհանուր համակարգում:»:

2. Հրամանում լրացնել նոր՝ 8.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.

«8.1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված կիբերհանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 136-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 151-րդ հոդվածի 2-րդ մասով, 201-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 202-րդ հոդվածով, 204-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 238-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 239-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 240-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ

կետով, 313-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 314-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 328-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 422-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների փաստերով նախաձեռնված և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթներն իրականացնել դատախազական խմբի կողմից, որում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության այն վարչության դատախազները, որի լիազորությունների մեջ է մտնում նշված քրեական վարույթով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը՝ համաձայն սույն հրամանի 1-ին կետի:

Սույն հրամանի 7-րդ կետի 7.4-րդ ենթակետի և սույն կետի առաջին պարբերության կարգավորումները վերաբերելի են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 136-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 151-րդ հոդվածի 2-րդ մասով, 204-րդ հոդվածի 2-րդ մասով, 205-րդ հոդվածի 2-րդ մասով, 313-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 314-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 328-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 422-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնված քրեական վարույթներին միայն այն դեպքերում, երբ առերևույթ հանցագործությունները կատարվել են տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ:»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական

դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ